№ 6 (10)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2020

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

6 (10)

ԵՐԵՎԱՆ 2020
ЕРЕВАН 2020
YEREVAN 2020

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №6 (10). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2020. – 202 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ПЕРВЫЕ ШАГИ В НАУКЕ

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ИСКУССТВА ХАЧКАР С 6–17 ВВ.

Армен Самвелович Аветисян
avet1syan.armen@inbox.ru

Магистрант 1 курса
направления «Теория, история и управление искусства»,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Целью настоящей статьи является представление истории становления и развития искусства Хачкар с 6–17 вв.
Ключевые слова: Хачкар, становление истории, развитие искусства, историография.

Պատմագիր Ագաթանգեղոսի աշխատության համաձայն, Հայաստանում խաչերը երևան են գալիս Գրիգոր Լուսավորչի կողմից նոր կրոնը երկրում տարածելու ընթացքում[1]: Դրանք կանգնեցվում էին ավերված հեթանոսական մեհյանների տեղում, որպես նոր կրոնի հաղթանակի հավաստում, կառուցվելիք տաճարի տեղանշում: Ապա դրանք կանգնեցվում էին ամենուրեք՝ բնակավայրերում, ճանապարհների վրա, հրապարակներում և այլուր: Այսպիսով, կատարվում էր «հեթանոսական տարածքի»

[1] Այդ մասին տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն հայոց (աշխարհաբար թարգմանությունը Ա. Տեր-Ղևոնդյանի): – Եր., 1983: – էջ 394–402:

քրիստոնեացում: Տարածքի քրիստոնեացումը նախ և առաջ նշանակում էր նրա «խաչացում»:

Մինչ 4-րդ դարը (մինչ Կոստանդինոս Մեծի ժամանակները), երբ առաջին քրիստոնյաները ստիպված էին գաղտնի դավանել քրիստոնեությունը և գաղտնի պաշտել նրա այս կամ այն գաղափարը ցուցող մի շարք խորհրդանշաններ ու պատկերներ(ձուկ, նավ, աղավնի, արմավենի և այլն), խաչը դեռ համարվում էր սպանության և անարգանքի գործիք և որպես քրիստոնեության խորհրդանշան կիրառվում էր եզակի դեպքերում: Միայն քրիստոնեության հաստատումից հետո խաչը դարձավ նոր կրոնի խորհրդանիշ և լայն տարածում ստացավ:

Վաղ քրիստոնեական արվեստում որոշակի տեղ են զբաղեցնում հավասարաթև կամ հունական խաչերը: Հայաստանում տարածված հավասարաթև խաչերի զգալի մասը ունի դեպի ծայրերը շառավղաձև լայնացող թևեր: Նման խաչերը երբեմն կոչվում են նաև սիրիական, քանի որ դրանք սիրիական բազիլիկաների ամենատիպական խաչապատկերն են: Այսպիսի խաչերի առավելությունն այն է, որ դրանք շատ հեշտ է քանդակել սահմանափակ մակերևույթների վրա:

Զարգացման ավելի մեծ հեռանկարներ ունեցավ ձգված համամասնություններով խաչը, որը տարածվեց հավասարաթև խաչերից մի փոքր ուշ՝ 5-րդ դարի կեսերից սկսած: Այս խաչերն ունեն հորիզոնական թևերի համեմատ ավելի երկար, ուղղաձիգ թևեր, որոշ դեպքերում էլ՝ ստորին թևի ընդգծված երկարություն:

Ձողաբարձ խաչերը կարելի է բաժանել անշարժ և շարժական տեսակների: Առաջին դեպքում դրանք ունենում են զանգվածեղ պատվանդան, կարճ ձող, երբեմն էլ՝ խաչատակի խոյակ (շրջանի մեջ ներառված ձողաբարձ խաչերն համարվել են Գր. Լուսավորչի և Տրդատի կողմից կանգնեցված խաչեր): Դրանց մի մասը պատրաստվել է փայտից, որոշ օրինակներ էլ կամ դրանց առանձին մասեր՝ մետաղից:

Պետք է նշել, որ խաչի քրիստոնեաբանական ընկալումը որևէ կերպ չէր կարևորում քարի պահը: Խաչքարի պաշտամունքն արդյունք էր նաև հայերի՝ առանձին քարակոթողի (ժայռի, լեռան) հանդեպ տածած ավանդական պաշտամունքի: Հայ ժողովուրդը դարեր ի վեր քար-ժայռին վերագրել է առասպելական ուժ, կերպավորում, խորհուրդ: Այդ պաշտամունքի հիմքերից մեկը այն բնաքարային միջավայրն է, որտեղ ձևավորվել ու զարգանում էր հայ մշակույթը: Հայը իր առասպելական աշխարհընկալմամբ լեռներին, ժայռերին, քարափներին վերագրել է սրբազան ծագում և սրբազան գործառույթ:

Հարկ է նշել, որ առաջին խաչքարերը կարող էին առաջանալ ավելի վաղ քան 9-րդ դարում: Դրան արգելք հանդիսացավ 8-րդ դարի առաջին քառորդում արաբների վարած քաղաքականությունը, որը մերժում էր ոչ միայն մարդկային քանդակները, այլև խաչանշանները: Այդ է վկայում նաև 8-րդ դարի պատմիչ Ղևոնդը, որը, գրելով քրիստոնեական կոթողների ավերման մասին, գրում է «Խորտակէր եւ զնշան տէրունեան խաչին Քրիստոսի»:

6–7-րդ դարերի սահմանագծում խաչային հորինվածքը արդեն լիովին ձևավորված էր, սակայն ընդհուպ մինչ 9-րդ դարի կեսերը խաչքարի՝ որպես առանձին կանգնած կոթողի մասին փաստագրված որևէ վկայություն չկա:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում 7-րդ դարի վերջերից մինչ 9-րդ դարի արաբների տիրապետության շրջանում գրեթե դադարում է թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր շենքերի, ինչպես նաև կոթողային հուշարձանների շինարարությունը:

9-10-րդ դարերից սկսած Հայաստանում բուռն ծաղկում են ապրում քաղաքները (Անի, Կարս, Լոռի, Վան), հիմնվում են վանքեր և մենաստաններ (Տաթև, Սևան, Գնդեվանք, Սանահին, Հաղպատ, Հոռոմոս), որոնք միևնույն ժամանակ դառնում են հոգևոր մշակույթի կարևոր կենտրոններ: Զարգացում են ապրում ճարտարապետությունը, որմնանկար-

չությունը, քանդակագործությունը, որոնք արտահայտում են և՛ կրոնադավանաբանական, և՛ աշխարհիկ բովանդակություն: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ երևան են գալիս միջնադարյան Հայաստանում այնքան տարածված խաչքարային հուշարձանները, որոնք հարատևում են մինչ մեր օրերը:

Խաչքարի կերտման գործընթացը ակսվում էր քարատեսակի և սալաբեկորի ընտրությունից: Անկախ Հայաստանում քարի առատությունից մեծ քարաբեկորներ ստանալը դժվար գործ էր: Դժվարություն էր ներկայացնում նաև կոթողների տեղափոխումը և կանգնեցումը (ինչի մասին են վկայում որոշ խաչքարերի վրա առկա ճարտարապետական տեսքի և քանդակային հորինվածքի հետ կապ չունեցող մանրամասներ): Պատվանդանի վրա կանգնեցվելու համար խաչքարն ունենում էր հատուկ պոչուկ-ելուստ, որն ագուցվում էր պատվանդանի վրա արված հստակ փոսորակի մեջ և ամրացվում մանր քարերով և կրաշաղախով: Հնարավոր է, որ առանձին դեպքերում պոչուկը պատվանդանին կամ քիվը սալին միացնելիս կիրառվել են նաև քարե, փայտե կամ մետաղե ամրակսեպեր:

Ի տարբերություն վաղմիջնադարյան կոթողների, որոնք հիմնականում բաղկացած են խարիսխ-պատվանդանից, սյունից, խոյակից, որը, որպես կանոն, պսակվում էր խաչկալի վրա ամրացվող թևավոր խաչով, առաջին խաչքարերն իրենցից ներկայացնում են ուղղաձիգ տափակ սալեր՝ նեղացող պոչուկով ուղղակի խրված հողի մեջ:

Խաչքարերը երևան եկան արաբական լծի թուլացմանը զուգահեռ, ուստի պատահական չէ, որ առաջին թվագիր խաչքարերը համապատասխանում են Արաբական խալիֆայությունից Հայաստանի՝ քաղաքական անկախություն ձեռք բերելու ժամանակին: Առաջին խաչքարերը կանգնեցնողներն էին պետության և եկեղեցու մի շարք աչքի ընկնող դեմքեր: Վաղ թվագրություն ունեցող խաչքարերից մեկը կանգնեցրել է Կատրամիդե թագուհին 879 թ-ին: Խաչքարային առաջին հորինվածքները վաղ

միջնադարյան հորինվածքների համեմատ շատ պարզունակ են: Դրա պատճառներից կարող են լինել դավանական քաղաքական տեղաշարժերը, որ կատարեցին արաբները, ինչպես նաև խաչքարերի՝ որպես հուշարձանային նոր տիպ սկզբնավորվելու հանգամանքը: Հետագայում նյութական պայմանների բարելավման և հոգևոր և էսթետիկական պահանջների զարգացման հետ մեկտեղ զարգանում է նաև խաչքարային արվեստը, այդ հուշարձանները շքեղ քանդակներով դրվագելու ձգտումը:

9-րդ դարի ամենաաչքի ընկնող խաչքարերից մեկը գտնվում է Գեղարքունիքի Մեծ Մասրիկ գյուղի հին գերեզմանոցում:

Մոտավորապես 10-րդ դարում խաչքարային հորինվածքը դարձավ ավելի փոխկապակցված: Տարածվում են կանոնավոր ուղղանկյուն խաչասալերը:

10–11-րդ դարերում ուղղանկյուն խաչքարերի մի մասը սալի ներքնամասում որևէ պոչուկ կամ ելուստ չունի, ինչը վկայում է, որ դրանք նախատեսված էին հոգևոր շինությունների պատի մեջ դնելու համար (եկեղեցի, գավիթ, մատուռ): Հավանական է,որ 10-րդ դարում կամարաձև սալի փոխարինումը քառանկյուն վերնամաս ունեցող սալով նույնպես կարող էր թելադրվել այն պատի մեջ ագուցելու պահանջով, ինչը բավական տարածված երևույթ էր այդ ժամանակաշրջանում:

Որմնափակ խաչքարերը երբեմն զետեղվում են նաև հուշարձանների պատերի մեջ: Որմնափակ խաչքարերը մեծ տարածում են ունեցել 11–14-րդ դարերում, իսկ 14-րդ դարի երկրորդ կեսից գրեթե դադարում է սրանց շինարարությունը:

12-րդ դարից սկսած խաչքարը դառնում է նաև միջնադարյան գերեզմանոցի համապատկերի հիմնական տարրը: Այն, որպես կանոն, կանգնեցվում է հարթ կամ երկթեք տապանաքարի արևելյան ծայրին՝ բարձր պատվանդանի վրա, այնպես որ հանգուցյալի հայացքն ուղղված լինի դեպի խաչը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ խաչքարը երբեք

չէր փոխարինում տապանաքարին, քանզի այն, ի տարբերություն վերջինիս, որը դրվում էր հորիզոնական դիրքով, կանգնեցվում էր ուղղաձիգ[2]:

Տապանաքարի և խաչքարի միջև կապի կայունացման հետևանքով երբեմն փորձ է արվել տապանաքարի խաչքարի պատվանդանը կերտել միակտոր քարից:

Ձևավորվում է խաչի՝ որպես հանգուցյալների հոգիների փրկության համընդհանուր միջնորդի ընկալումը:

Միջնադարում սովորություն է եղել խաչքարերի ներկումը կարմիր գույնով (կարմիրը և՛ արքայական, և՛ Քրիստոսի արյան գույնն է): Այն դեպքում, երբ քարերը շատ ծակոտիներ ունեին, դրանց ճակատը նախապես կրաշաղախի բարակ շերտով ծեփում էին և ապա ներկում: Խաչքարը ներկելու սովորությունը գալիս է հնուց: Հիմքեր կան կարծելու, որ երբեմն խաչքարերը ներկվել են բազմագույն ներկով. դրա ապացույցը Հաղպատավանքի Ամենափրկիչ (1273 թ.) խաչքարն է, առայժմ միակը իր տեսակի մեջ:

Այսպես, եթե հորինվածքի բաղադրիչների մի մասը զուտ երկրաչափական, իսկ մի մասն էլ բուսականացված քանդակներով իրագործվող խումբը բնորոշ է Հս. Հայաստանին (Սանահին, Հաղպատ, Հաղարծին), ապա հիմնականում Այրարատի կենտրոնական գավառներում, Տավուշում և Արցախում տեղակայվող մի այլ խումբ առանձնանում է խոշոր մանրամշակ վարդյակով, ոճավորված ծաղկեփնջերի վերածված արմավենազարդերով, սրբերին ու մահկանացուներին ներկայացնող պատկերաքանդակներով: Եթե Խաչելությունը, Համբարձումն ու Արդար դատաստանը համատեղող Ամենափրկիչ խաչքարերի տարածքը Հս. Հայաստանն է, ապա մահկանացուների պատկերաքանդակներով առանձնանում է Արցախը և այլն:

[2] Այդ մասին տե՛ս Գ. Սարգսյան, Խոսում են տապանաքարերը: – Էջմիածին, 1963: – էջ 39:

Մասնագիտացված խաչքարերի շարքում լայն տարածում ունեին Հազախաչերը, Հազամեռները, Թալանոցները, որոնք ի զորու էին բուժել մրսածության հետ կապված հիվանդությունները: Ըստ անցյալի հավատալիքների Սբ Սարգիս կոչվող խաչքարերը իրենց այցելող սիրող զույգերին երջանկություն են բերում, Սբ Գևորգ կոչվող խաչքարերի այցելուները անխոցելի և համարձակ են դառնում պատերազմում:

Մեծ տարածում են ունեցել Ցասման խաչեր կոչված խաչքարերը՝ կանգնեցված բլուրների վրա, գյուղերի և վանքերի մոտակայքում և այլուր: Բանասեր Սբ Հայկունին գրում է. «Բագրեւանդա շատ մի գիւղերու մոտ բարձր դիրքի վերայ տեսած եմ մեծ խաչ արձաններ, որոնց գիւղացիք Սասման խաչ կասեն, որ լինելու է Ցասման խաչ, արդեն երբ երաշտ լինի, զոհ կը մատուցանեն եզ, կով, ոչխար և այլն… կօրհնեն կուտեն կասեն Սասման ժամ»[3]: Զոհաբերության այս սովորությունը Հայաստանում տարածված էր դեռևս հեթանոսության շրջանում: Ինչպես գրում է Կ. Մելիք-Փաշայանը[4], Նարի (ջրի և պտղաբերության աստվածուհի) և Անահիտի արձանները շրջեցնում էին և ամեն կողմից նրանց վրա ջուր ցանում ու զոհեր մատուցում, որպեսզի անձրև գա: Միջնադարում այդպիսի դեր վերագրվում էր այսպես կոչված Ցասման խաչերին: Մանուկ Աբեղյանը Ցասման խաչերը համարում է Աստղիկ-Դերկետո դիցուհու հեթանոսական շրջանից մեզ հասած հավատալիքների վերապրուկ՝ կապված ջրի պաշտամունքի հետ[5]:

Հովհան Օձնեցու կանոնի համաձայն՝ ցանկացած նյութից պատրաստված խաչ, չի կարող իր մեջ աստվածային զորություն կրել, քանի դեռ օծված չէ համապատասխան եկեղեցական ծեսով: Նման պայմաններում խաչքարերի վրա ավետարանական թեմաների ու կերպարների

[3] Տե՛ս Գ. Սարգսյան, Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, (մաս Ա): – Էջմիածին, 1964: – էջ 130:

[4] Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը: – Եր., 1963: – էջ 30–31:

[5] Կ. Մելիք-Փաշայան, Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ: – Եր., 1941: – էջ 93:

երևան գալը 12-րդ դարից սկսած կարելի է դիտել որպես հայ եկեղեցու նախաձեռնություն՝ վերաքրիստոնեացնելու խաչքարերը: Այս շարժման բարձրակետն է Ամենափրկիչ կոչված խաչքարի երևան գալը 13-րդ դարի վերջին:

Կարելի է հավաստել, որ Ամենափրկիչ խաչքարի գաղափարն ու իրագործումը պատկանում է Հաղպատի, գուցե նաև Սանահինի վանականությանը: Ամենահին օրինակը կանգնեցվել է Հաղպատում 1273 թ-ին: Ի տարբերություն սովորական ծաղկուն խաչերի, խաչն այս դեպքում որևէ զարդ կամ բուսային հավելում չի կրում և վերարտադրում է բուն խաչելության խաչը՝ Քրիստոսով հանդերձ: Խաչը կանգնեցված Գողգոթայի բլրին տեղադրված զանգվածեղ խորանարդաձև պատվանդանի վրա: Գողգոթան պատկերված է կիսաշրջանակից ավելի մեծ սեգմենտի տեսքով, որին ներգծված է բուսազարդերով ծածկված եռակամար մի խորան: Կենտրոնական կամարում պատկերված է Ադամի գլուխը: Խաչյալ Քրիստոսից վերև՝ խաչի վերին թևի երկու կողմերում, պատկերված են արևն ու լուսինը, երկու քերովբեներ և երկու սրբեր: Քրիստոսի երկու կողմում կանգնած են Մարիամ աստվածածինն ու Հովհաննես ավետարանիչը, Հովսեփ Արեմաթացին ու Նիկոդիմոսը, որը փորձում է երկար ունելիով Քրիստոսի ոտքից հանել խաչելության բեռը: Քիվի վրա տեղադրված է Քրիստոսի համբարձման տեսարանը, որի մասն են կազմում 12 առաքյալները՝ վեց- վեց տեղադրված հորինվածքի եզրագոտիների վրա: Խաչքարի վրայի արձանագրությունները մեկնաբանում են հորինվածքը: Խաչքարն ամբողջովին ներկված է եղել (երևում են կարմիր, նարնջագույն, սպիտակամոխրագույն ներկերը): Սա մեզ հասած միակ բազմագույն ներկած խաչքարն է: Բոլոր կերպարները պատկերված են խնդրարկուի դիրքով՝ ձեռքերը դեպի Քրիստոսը պարզած, բայց հայացքները՝ դիտողին, որն ընկալելի է որպես Քրիստոսից միջնորդության հայցում նրանց, ում նվիրված է խաչքարը:

12-րդ դարից սկսած՝ կիրառվում է քանդակազարդման երկու հիմնական ոճ: Առաջինի դեպքում ողջ սալը պատվում է քանդակներով՝ գրեթե ժխտելով անզարդ ետնախորքի գաղափարը: Երկրորդ դեպքում հորինվածքի առանձին բաղկացուցիչները քանդակվում են իրարից բավականին առանձնացված: Սա իրագործվում է ետնախորքի հեռացման տեխնիկայով. սկզբում հարթ մակերեսի վրա տարվում են հորինվածքի առանձին բաղկացուցիչների եզրագծերը, հետո տաշվում-հեռացվում են նրանց միջակայքերը:

Խաչքարային արվեստի ամենաբարձր ծաղկման շրջանը կարելի է համարել 13-րդ դարի կեսը և 14-րդ դարի սկիզբը: Այս շրջանում տարածում է գտնում խաչքարերի մի խումբ, երբ հորինվածքը կազմվում էր միայն խաչաքանդակներից: Այս միտումը կարող էր կապված լինել ընդհանրական պատկերացման հետ, որն ավելի ակնառու է դառնում 13-րդ դարից սկսած, երբ յուրաքանչյուր խաչանշան կարող էր խորհրդանշել առանձին անհատի, նրա խնդրանքը, հիշատակը կամ փրկությունը: Այս առումով առանձնակի նշանակություն են ստանում այն խաչքարերը, որոնց հորինվածքը կազմվում է 2 կենտրոնական խաչերով: Արձանագրությունները վկայում են, որ նմանատիպ խաչքարերը կանգնեցվել են երկու անձի համար:

14–15-րդ դարարի հայկական հոծ գաղթականությունը խաչքարեր է կանգնեցրել այնտեղ, ուր դադար է առել՝ Փոքր Ասիա, Վրաստան, Աղվանք, Հս. Կովկաս, Իրան, Հնդկաստան և այլն:

Խաչքարերը հայ միջնադարյան մշակույթի այն ստեղծագործությունների շարքին են պատկանում, որոնք երբեմն իրենց վրա են կրում նաև կերտող վարպետների անունները: Միջնադարում խաչքարեր կերտող վարպետները վիմագիր արձանագրություններում կոչվել են կաղմող, հորինող, գործող, նկարող, գրիչ և այլ մակդիրներով[6]: Դրանց կողքին

[6] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ ու քարագործ վարպետներ: – Եր., 1963: – էջ 129:

շատ դեպքերում վարպետները հանդես են գալիս իրենց անունների սոսկ հիշատակումով, երբեմն էլ խնդրելով միայն հիշել իրենց: Քանդակագործ վարպտների աշակերտները իրենց հերթին կոչվել են թերատաշ, աշակերտ, մոթ, դեռայբ և այլն, իսկ երբեմն էլ արձանագրությունների վերջում՝ վարպետների անվան հիշատակումից հետո, նշվել են միայն նրանց անունները՝ առանց մակդիրի:

15–17-րդ դարերում Հայաստանում տարածում գտած տապանաքարային քանդակի հիմնական թեման մահը հաղթահարելու ժողովրդական պատկերացումներն են, հիմնական կերպարները՝ հավատացյալները: Խոսելով 15–17-րդ դարերի խաչքարերի մասին՝ պետք է ուշադրություն դարձնել նաև Ջուղային, որի խաչքարերն իրենց արվեստով առանձնանում են թե՛ նախորդ ժամանակաշրջանի, թե՛ համաժամանակյա հարևան տարածքների խաչքարերից: Հիմքում ունենալով հայ խաչքարային մշակույթի դասական ավանդույթները՝ Ջուղան, շնորհիվ իր բացառիկ տնտեսա-մշակութային ու քաղաքական դիրքի ու դերի, նոր արտաքին հարդարում ու իմաստաբանություն հաղորդեց խաչքարերին: Հիմնավորապես փոխվում են խաչասալի համամասնությունները՝ երկարությունը գերազանցում է լայնությանը 3–4 անգամ: Սալերը դեպի հիմք չեն նեղանում, պատվանդաններ չունեն և ուղղակի խրվում են հողի մեջ, քիվը ճարտարապետորեն շատ թույլ է արտահայտված, դրա փոխարեն ընդգծված է սլաքաձև խորանը: Կենտրոնական խաչը փոխարինվում է զուգահեռ երկու շարքով դասավորված խաչերով, ինչը նպաստում է դեկորատիվության աճին: Հորինվածքը, որպես կանոն, բաղկացած է 4 ուղղաձիգ տեղադրված բաղադրիչներից՝ քիվ, խորան, վարդյակ, արձանագրություն կամ պատկերաքանդակ: Պատկերները, նախշերը Ջուղայում ավելի հստակ ու համաչափ են, սակայն պարզ և միօրինակ: Բավականին թիվ են կազմում երկմարմին միագլուխ առասպելական կենդանիները՝ պատկերված բացառապես քիվի վրա (նկատենք, որ զանազան առասպելական արարածների պատկերներով աչքի է ընկնում 12–14-րդ դարարի հայ եկե-

ղեցական քանդակը: Սրանք հանդես են գալիս որպես սրբազան տարածքը պաշտպանող և ցուցող կերպարներ):

Ջուղայի բնակչության բռնի գաղթեցումից հետո խաչքարային արվեստը կորցնում է իր նախկին գեղարվեստական հմայքը[7]:

Հավանական է, որ խաչքարային հորինվածքում ներքևը ցուցում է անցյալը, աշխարհիկը, մահը: Եվ քանի որ խաչքարային հորինվածքի հիմնական իմաստաբանությունը հանգում է խաչի՝ որպես համընդհանուր միջնորդի գործառույթին, ուստի այս քանդակները լոկ հետմահու պատկերներ չեն, այլ հանգուցյալների կյանքի մատյանն են և պետք է նպաստեն հանգուցյալի հոգու փրկությանը[8]:

Խաչքարը, որպես կանոն, անհատական կոթող էր և ներկայացնում էր առանձին անհատի գործը: Ցանկացած խաչքար կանգնեցնողը հոգում էր, որ հենց իր կանգնեցրած խաչքարին երկրպագեն հավատացյալները և Աստծուն ուղղված աղոթքներում հիշատակեն իր անունը: Դրա համար խաչքարերի վրա հաճախ փորագրվում էր մի խնդրանք պատգամ. «յաղաւթս յիշեցէք ի Քս», այսինքն՝ Քրիստոսին ուղղված աղոթքներում հիշեցեք:

Խաչքարային հորինվածքի առանցքային-կենտրոնական բաղկացուցիչն է խաչը (խաչի վերին թևը կոչվում է թագ, բուն թևերը տարբերվում են որպես աջ և ձախ, խաչահատումը կոչվում է ակն), և մնացած բոլոր բաղադրիչները իմաստաբանական արժեք են ստանում նախ և առաջ խաչի հանդեպ ունեցած իրենց դիրքին ու կապին համապատասխան: Խաչքարային հորինվածքում շարժումը ներքևից դեպի վերև շարժում է

---

[7] 17-րդ դարի մոտ 10.000-ի հասնող խաչքարերից 20-րդ դարի վերջին Ջուղայում մնացել էին միայն 3.000-ը: 2002–2005 թթ. Ադրբեջանի կառավարության կողմից կազմակերպված բարբարոսության հետևանքով վերացվեցին և այդ խաչքարերը:

[8] Ըստ պաշտոնական քրիստոնեության և հայ ավանդական մի շարք պատկերացումների՝ Արդար դատաստանի ժամանակ մարդկային գործերը պիտի ներկայացվեն կյանքի մատյանի օգնությամբ, որ կազմում են հրեշտակները: Այս առումով մեծ է խաչքարերի դերակատարումը:

արմատից դեպի պտուղը, երկրայինից դեպի երկնայինը, աշխարհականից դեպի սրբազանը, անցյալից դեպի ապագան, մահից դեպի անմահություն: Խաչը, իր վերին թևով ձգվելով դեպի վերևի խորհրդանշանները, իսկ ներքևի թևով հենվելով ներքևի խորհրդանշաններին, հանդես է գալիս որպես այս երկու ոլորտների միջև կապի իրագործող, համընդհանուր միջնորդ Աստծո և մարդու միջև: Սա է խաչքարային հորինվածքի հիմնական իմաստաբանությունը:

Ընդհանրացնելով խաչքարային բազմաթիվ արձանագրությունների ակնկալիքային հատվածները՝ կարելի է հավաստել, որ Սուրբ նշանից ակնկալվում էր օգնություն, հաղթանակ, երկար կյանք, հիշատակ, հոգու փրկություն: Ուշագրավ է, որ արձանագրություններում չկան պրագմատիկ խնդրանքներ ու ակնկալիքներ: Միակ աշխարհիկ խնդրանքը արևշատություն, այսինքն՝ երկար կյանք խնդրելն է:

Խաչի փրկագործական գործառույթը սկսվում է նրանով, որ այն հանդես է գալիս որպես ննջեցյալների պահապան: Բացի այդ խաչը հավատացյալների ինքնության նշանն էր և ուղղված էր վերջին օրերին: Կանգնեցվելով գերեզմանի վրա այն պետք է վերջին օրերին և՛ անխաթար պահեր գերեզմանը, և՛ երկրորդ գալուստին իրենով մատնանշեր այն հանգուցյալին, ում նվիրված էր, ուղեկից լիներ նրան դեպի իրական խաչը, դեպի Քրիստոս: Այն պետք է բարեխոս լինի Քրիստոսի առջև (բարեխաւս առ Քս): Այսպես ի հայտ է գալիս խաչի՝ ապագային ուղղված մի գործուն համալիրի կերպարը, որը համադրում է խաչի միջնորդ ու փրկագործական զորությունը:

Ինչպես հայտնի է, հայկական միջնադարը ապրում էր մշտական արտաքին ներխուժումների, ավերների, սեփական ինքնությունը պահելու, պաշտպանելու պայմաններում: Պայքարը դարձել էր կենսընթացի պարտադիր մաս: Ժամանակաշրջանի այս դեպքերը իրենց արտացոլումն են գտել նաև հայ մշակույթում, մասնավորապես՝ խաչքարային արվեստում: Առաջ է գալիս խաչի՝ որպես հաղթանակի ու ամենահաղթ զեն-

քի իմաստաբանությունը: Այս ընկալման հիմքը նախ և առաջ Քրիստոսի փրկագործական խաչելությունն է և մահվան հանդեպ նրա տարած հաղթանակը: Բացի այդ՝ խաչի այս կերպարը կարող էր կապված լինել նաև մկրտության ծեսի հետ, որը ենթադրում է խաչի ընկղմում ջրի մեջ, որի հետևանքով, ինչպես Քրիստոսի մկրտության դեպքում էր, սպանվում էին մեղքը, մահը: Նկատենք, որ խաչը որոշ նմանություններ ունի թրի հետ: Հավանական է, որ այստեղից է առաջացել խաչի՝ որպես աստվածային արյամբ օծված զենքի գաղափարը, որը արտահայտվել է նաև մի շարք արձանագրություններում: Օրինակ՝ Յաղաց Քարի 1275 թ. մի խաչքարի վրա գրված է. «Այս աւծեալ արձան նկարեալ արեամբ Արարչին…»[9]:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ խաչը և խաչքարը միջնադարում հանդես էին գալիս որպես մահը հաղթահարելու, փրկության հասնելու համար միջնորդներ:

ЛИТЕРАТУРА

1. *Աբեղյան Մ.* «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, ԱՐՄՖԱՆ հր.: – Երևան, 1941: – 98 էջ:
2. *Ագաթանգեղոս* Պատմություն հայոց (աշխարհաբար թարգմանությունը Ա. Տեր-Ղևոնդյանի), ԵՊՀ հր.: – Եր., 1983: – 551 էջ:
3. *Բարխուդարյան Մ.* Միջնադարյան հայ ճարտարապետներ ու քարգործ վարպետներ, ԳԱԱ հր.: – Եր., 1963: – 381 էջ:
5. *Հայկունի Մ.* Բագրեւանդ. Ջրաբաշխ գաւառ, (մաս Ա), Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի: – Էջմիածին, 1964: – 384 էջ:
6. *Մելիք-Փաշայան Կ.* Անահիտ դիցուհու պաշտամունքը, ՀՍՍՌ ԳԱ հր.: – Եր., 1963: – 164 էջ:

[9] Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը: – Եր., 2008: – էջ 367–370:

7. *Պետրոսյան Հ.* Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական կենսատարածքի եւ կենսընթացի մասին. աշխարհը որպես այգի – Հանդէս ամսօրեայ, 2002: – էջ 411–440:
8. *Պետրոսյան Հ.* Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, ԵՊՀ հր.: – Եր., 2008: – 406 էջ:

ԽԱՉՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 6–17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ա.Ս. Ավետիսյան
avet1syan.armen@inbox.ru

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
«Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում»
բաժնի 1-ին կուրսի մագիստրոս,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել խաչքարային մշակույթի առաջացումը և զարգացումը 6-17–րդ դարերում:
Բանալի բառեր՝ խաչքար, պատմության կայացում, արվեստի զարգացում, պատմագրություն:

THE FORMATION AND DEVELOPMENT OF KHACHKAR ART FROM 6th TO 17th CENTURIES

A. Avetisyan
avet1syan.armen@inbox.ru

Master's student at the Department of Theory, History and Management of Art,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The aim of the article is to present the historical formation and development of Khachkar art in the period from 6th to 17th centuries.

Keywords: khachkar, formation of history, development of art, historiography.

Информация о статье:
статья поступила в редакцию 29 марта 2020 г.,
подписана к печати в номер 6 (10) / 2020 – 19.04.2020 г.